Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22.265

Հրատարակութիւն «Զարկ»-ի № 3

Ն. Ե.

ԱՇԽԱՏԱՆՔ, ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ, ՓՈՂ.

ԹԱՐԳՄ. Վ.

ԳԻՆԸ 2 ԿՈՊ.

1906
ԹԻՖԼԻՍ

331
Ա-65

331
Կ-65

Ն. Ճ.

ԱՇԽԱՏԱՆՔ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ ՓՈՂ

ԹԱՐԳՄ. Վ. ՓԱՄՓ.

ԹԻՖԼԻՍ
Էլէքտրաշարժ տպարան. Ընկ. «Հերմես» Մադաթ. փող. № 5.
(208)
1906

22265

19 FEB 2013

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՌ—Арм. ССР
им. А. Мясн
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

35084-62

ԱՇԽԱՏԱՆՔ, ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ, ՓՈՂ

I

Եթէ դուք տասն րուբլի ունիք, իսկ ձեր բարեկամը՝ հինգ,—դուք ձեզ համարում էք նրանից երկու անգամ աւելի հարուստ. եթէ մի մարդ ունի հարիւր հազար, դուք նրան կոչում էք հարուստ։ Ուրեմն մարդիկ ձեզ թւում են այնքան աւելի հարուստ, որքան աւելի շատ փող ունեն։ Բայց եթէ մի մարդ, ընկած լինի մի անբնակ կղզի, գըրպանում ունենայ հարիւր հազար, դուք նրան հարուստ կը կոչէ՞ք...

Մի այսպիսի մարդու նման, եթէ յանկարծ գտնուէիք մի անբնակ կղզում, ինչի՞ց կսկսէիք ձեր տնտեսութիւնը։ Կը գնայիք ոսկու հանք որոնելու, որպէսզի փող շինէք, թէ՞ այն մասին կը մտածէիք, թէ ինչ ուտէք, որտեղ ապրէք, ինչ հագնէք, ինչպէս պաշտպանուէք վայրենի գազաններից։

Ինչպէս որ դուք էք մտածում, այդպէս էլ մտածում էին առաջ ամենքը, որ հարստութիւնը փողի մէջ է և որ այն ժողովուրդն է հարուստ, որը շատ փող ունի։ Սակայն 18-րդ դարի վերջերում Անգլիայում յայտնուեց մի գիտնական, որը ապացուցեց, թէ հարստութիւնը ոչ թէ փողի մէջ է, այլ մարդկային աշխատանքի մէջ։ Այդ գիտնականի անունն էր Ադամ Սմիթ։

II

Ադամ Սմիթի մանկութեան մասին համարեա ոչինչ յայտնի չէ։ Յայտնի է միայն այն, որ նա տկար երեխայ էր և որ երեք տարեկան հասակում գնչուները նրան գողացել են, սակայն շուտով գտնուել է։

Ադամ Սմիթը ծնուել է Շոտլանդիայի Կիրգալդի կոչուած փոքրիկ քաղաքում 1723 թվի յունիսի 5-ին։ Սկզբնական կրթութիւնն ստացաւ ուսումնարանում և, ինչպէս բոլոր քանքարաւոր մանուկները, աչքի էր ընկնում դէպի աշխատանքն ու ընթերցանութիւնն ունեցած իր սիրովը և զարմանալի սուր յիշողութեամբը։

Ադամ Սմիթը ընկերների հետ շատ քիչ էր խաղում և նրանցից խուսափում էր։ Չը նայած դրան՝ նրան սիրում էին, որովհետև նա խոնարհ և լաւ ընկեր էր։ Ադամ Սմիթը մտածկոտ էր, ցրուած, և յաճախ բարձր ձայնով խօսում էր ինքն իրան. այս սովորութիւնը իր ամբողջ կեանքում նա պահեց։

Տասնեւչորս տարեկան հասակում Ադամ Սմիթը թողեց ուսումնարանը և մտաւ Գլազգովի համալսարանը, որտեղ մնաց 3 տարի։ Համալսարանում նա չէր զբաղասում գիտութիւնների մի ճիւղը միւսին։ Մայն 1740 թվին, երբ մտաւ Բուլյոլի կոլէջը Օքսֆորդում, ապագայ տնտեսագէտը, որ քիչ էր մնում ամբողջ հոգով անձնատուր լինէր մաթեմատիկային՝ թողեց այդ և դիմեց բարոյական և քաղաքական գիտութիւնների ուսումնասիրութեան։

7 տարի Օքսֆորդում մնալով, Ադամ Սմիթը վերադարձաւ Շոտլանդիա իր մօր մօտ և բնակուեց 1748 թվին Էդինբուրգում։ Այստեղ բանահիւսնութեան դասախօսութիւններ էր անում, և նրա յաջողութիւնն այնպէս մեծ

էր, որ 1751 թվին Ադամ Սմիթին հրաւիրեցին Գլազգովի համալսարան տրամաբանութեան ամբիոնը, իսկ մի տարի անցած՝ բարոյական փիլիսոփայութեան ամբիոնը։ Ադամ Սմիթի դասախօսութիւնները լսելու համար գալիս էին Անգլիայի և Շոտլանդիայի բոլոր ծայրերից, և երիտասարդ պրոֆէսորի մասին ամեն տեղ սկսեցին խօսել։

Իր գտած յաջողութիւնը Ադամ Սմիթը ամենևին պարտական չէր իր պերճախօսութեան. ընդհակառակը, նա աչքի էր ընկնում իր հանդարտ, անպաճոյճ և շատ պարզ խօսակցութեամբ։ Ադամ Սմիթի դասախօսութեան գրաւչութիւնը կայանում էր նրանում, որ նա իր ասածները հիմնում էր բազմաթիւ փաստերի վրայ և այդ փաստերը համեմատում ու զուգադրում էր մի այնպիսի թափանցիկ և նուրբ կերպով, որ նրա ճառը մարմնացած ոգևորութիւն էր թւում։

Ադամ Սմիթը Գլազգովի համալսարանում մնաց 13 տարի և հէնց այդտեղ հաւաքեց այն ճոխ նիւթը, որի հիման վրայ նա հետագայում գրեց իր «Հետազօտութիւնը ժողովուրդների հարստութեան մասին»։

Ադամ Սմիթը, որպէս գիտնական, աչքի էր ընկնում իր առողջ դատողութեամբ, ուժեղ խելքով և մտքի անյողդողդ ազնուութեամբ։ Նրա հետազօտութեան մէջ ոչ մի պատահական բան չկայ. նա խօսում էր միայն այնպիսի առարկաների մասին, որ խորապէս ուսումնասիրել էր, այնպիսի քաղաքների մասին, որ տեսել էր, այնպիսի փաստերի մասին, որ ստուգել էր։

Ադամ Սմիթին լաւ ճանաչողները ասում են, որ նա խոնարհ բնաւորութեան տէր էր. նրա խօսակցութիւնը թէ խելացի և թէ ուրախ էր, բայց աւելի յաճախ նա քաշւող էր, մանաւանդ օտար մարդկանց մօտ։ Իսկ նրա

բնաւորութեան ամենագրաւիչ գիծը այն էր, որ նա միշտ հաւատարիմ էր մնում իր բարեկամներին։

Ադամ Սմիթը մեռաւ 1790-ին։

III

Բնութեան մէջ ոչ պատրաստի հաց կայ, ոչ զգիստ, ոչ կօշիկ։ Քանի դեռ եզը արածում է մարգագետնում՝ նա ոչ միս է և ոչ էլ կաշի. ոչխարը դաշտում՝ նոյնպէս մահուդ չէ. թռչունը, որ թռչում է անտառում՝ տապակած չէ. ձուկը, որ ջրումն է՝ ձկնաճաշ չէ. հաճարն ու ցորենը նոյնպէս ոչ հաց են, ոչ կարկանդակ։

Բնութեան մէջ գոյութիւն ունեն միայն ոյժեր և իրեր—զանազան կենդանիներ, բոյսեր, քամի, ջուր, շոգի, արեգակի տաքութիւն։ Հում նիւթերն ու ոյժերը անօգուտ են մինչև այն ժամանակ, երբ մարդը նրանց տալիս է այն ձևը, որ իրեն հարկաւոր է։ Նա եզը միս է դարձնում. կաշին՝ կօշիկ, բամբակ՝ մանած, իսկ մանածը՝ զանազան կտորներ. նա ջուրը դարձնում է շոգի, շոգին փակում է շոգի մեքենայի մէջ. նա քամուն դէմ է անում առագաստները և հողմաղացի թևերը։ Այսպիսով թէ դաշտում անգործ զբօսնող քամին, թէ ջուրը, թէ շոգին սկսում են մարդուն օգտակար ծառայութիւններ մատուցանել։

Այս բոլոր դէպքերում մարդը նոր նիւթի ոչ մի հիւլէն անգամ չի ստեղծում. նա չի ստեղծում նոյնպէս և մի նոր ոյժ։ Նա վերցնում է միայն այն, ինչ որ կայ, ինչ որ պատրաստի գտնւում է բնութեան մէջ, դնում է այդ պատրաստ բանը նոր յարաբերութիւնների մէջ, իսկ յետոյ արդէն իրենք, բնութեան ոյժերը ստեղծում են այն, ինչ որ հարկաւոր է մարդուն։

Ի՞նչ է անում, օրինակ, հողագործը։ Նա դուրսանով կամ արօրով տակ ու գլուխ է անում հողի մասնիկները և, նրանց դնելով արեգակի տաքութեան, խոնաւութեան և օդի վերաբերմամբ նոր յարաբերութիւնների մէջ՝ նրանց հնարաւորութիւն է տալիս նոր կոմբինացիայի մէջ մտնելու։ Նա վերցնում է գոմանոցից անասունների աղբը և ցրւում է արտի մէջ. նա վերցնում է ցորենի հատիկը, որ ընկած էր նրա շտեմարանում, և ձգում է հողի մէջ։ Այս բոլորն անելով, երկրագործը հանում է նիւթը նրա նախկին դրութիւնից և դնում է նորի մէջ, իսկ յետոյ հանդստութեամբ սպասում է հետևանքին։ Երբ հետևանքը յայտնուեց, այսինքն, երբ ցորենը բսաւ և հասաւ, հողագործը հաւաքում է ցորենը երկրից, տանում է, ծեծում, աղում. այսինքն, էապէս, շարժում է նիւթը այս կամ այն եղանակով, ընտրելով իր համար ամենից ձեռնտու եղանակը։ Երկրագործը կտրում է, ծեծում է, կոտրում է, տրորում է և նրա ամբողջ գործունէութիւնը իսկապէս հէնց սրանում է կայանում։

Ուրիշ արտադրութիւնների մէջ էլ մարդը վարւում է ճիշտ նոյն կերպ։ Բամբակ ստացուեց այն պատճառով, որ նրա սերմը դրուած էր հողի մէջ, յետոյ մարդը սպասում էր համբերութեամբ, թէ երբ բնութեան ոյժերը նրան թուփ կդարձնեն և նրա վրայ դուրս կգան աղւամազ հատիկներ։ Հաւաքելով հատիկները, մարդը ածեց գամբիւղի մէջ, իսկ գամբիւղը աղւամազի հետ տուն տարաւ։ Տանը նա դարձեալ սկսեց տեղափոխել նիւթը, այսինքն գասաւորեց աղւամազերը ուրիշ կարգով, և ոչ այնպէս, ինչպէս գտնւում էին հատիկների վրայ. նա աղւամազերը սանրեց, մանեց և ստացաւ թելեր, իսկ թելերից գործեց զանազան գործւածքներ։

Որպէսզի բնութեան առարկաներից ստացւի այն,

ինչ հարկաւոր է մարդուն՝ անհրաժեշտ է, որ ինքը նիւթը դրա համար պիտանի լինի,—ջրից և աւազից չի կարելի թել մանել։ Այդ պատճառով մարդը պէտք է գիտենայ իրերի յատկութիւնը և նրանցից օգտւելու ճարը գտնի։ Հազարաւոր տարիներ են անցել, մինչև որ մարդը հասել է այնպիսի սովորական և առօրեայ բաների, ինչպէս է, օրինակ, հաց թխելը։ Այժմ էլ կան ժողովուրդներ, որոնց խելքը դեռ այդ բանին չի հասնում և նրանք չգիտեն ոչ լաւ ալիւր պատրաստել, ոչ էլ այնպիսի հաց թխել, ինչպիսին ուտում ենք մենք։ Առաջին կօշիկը և առաջին զգեստը, որ մարդը կարեց, արտասովոր գիւտ էին իրենց ժամանակ. իսկ հաց թխելը, իհարկէ, մարդկութեան համար աւելի կարևոր է, քան շոգեմեքենայի և երկաթուղու գիւտերը։

IV

Բանի դեռ բամբակը վայրենի բուսնում է դաշտում, եզը վայրենօրէն արածում է մարգագետնում և ջուրը հոսում է գետում՝ նրանց համար ոչ ոք ոչինչ չի տայ։ Բայց լւացարանի մէջ ածւած ջուրը արդէն մի ուրիշ բան է և դառնում է օգտակար իր. նա նոյնիսկ գին է ձեռք բերում։

Այսպէս եղաւ այն պատճառով, որ ջրկիրը գետը գնաց, տակառի մէջ ջուր ածեց, տակառը բերեց բակը, իսկ ձեր խոհարարուհին բերեց այդ ջուրը ձեզ սափորով։ Այսպիսով, որպէսզի ջուրը մինչև ձեր ձեռքը հասնէր՝ պահանջւում էր շատ մարդկանց աշխատանքը, որոնք բերում և կրում էին ջուրը, պահանջւում էր սայլ շինողի աշխատանքը, որպէսզի սայլ լինէր ջուր կրելու համար պահանջւում էր տակառագործի աշխա-

տանքը, որպէսզի տակառ և դոյլ պատրաստ էր. պահանջւում էր կաշեգործի աշխատանքը, ձիասարք պատրաստելու համար. պահանջւում էր երկրագործի աշխատանքը, որպէսզի սնունդ պատրաստէր ջրկիրի, ձիու և ձեր խոհարարուհու համար. պահանջւում էր բրուտի աշխատանքը, որ կուժ շինէր, կօշկակարի ու դերձակի աշխատանքը, որ տնամաններ և զգեստներ կարէին ջրկիրի, տակառագործի և խոհարարուհու համար, և այլն։ Այս բոլոր աշխատանքը, բաշխւելով ջրի որոշ քանակութեան վրայ, նրան գին հաղորդեց, մի բան, որ նա չունէր գետում եղած ժամանակ։ Հիմա արեգակի տաքութեան համար ոչ ոք փող չի վճարի. բայց եթէ յայտնւի մի այնպիսի գիւտ, որ կարողանայ արեգակի լոյսն ու ջերմութիւնը ժողովել՝ այն ժամանակ դրանք գին ձեռք կը բերեն, որ կախւած կը լինի այն աշխատանքի չափից, որ թափւել է ճառագայթները ժողովելու և պահելու համար։

Ձեր մահուդէ զգեստը թանկ է ձեր կտաւէ բլուզից այն պատճառով, որ մահուդի պատրաստութեան համար թափւել է անհամեմատ աւելի շատ աշխատանք, քան կտաւի պատրաստութեան վրայ։ Ճիշտ է, առարկայի գինը որոշում է նաև այն հանգամանքը, թէ նա որքան անհրաժեշտ է. օրինակ, եթէ ձեզ հարկաւոր չէ մահուդէ զգեստ, այլ հարկաւոր է կտաւէ շոր, դուք մահուդէ զգեստին ոչինչ չէք տայ։ Այսպիսով, որևէ իրի գինը կախւած է գլխաւորապէս աշխատանքից, և միայն աշխատանքն է հաղորդում բոլոր առարկաներին օգտակարութիւն, որը նրանք առանց աշխատանքի երբէք չէին ունենայ։

Եթէ աշխատանքը բոլոր իրերին հաղորդում է օգտակարութիւն, ուրեմն պարզ է, որ որքան մարդիկ շատ ունենան օգտակար իրեր այնքան էլ նրանք հարուստ կը լինեն. իսկ որպէսզի մարդիկ որքան կարելի է շատ օգտակար ի-

բեր ունենան՝ հարկաւոր է որ իւրաքանչիւր մարդ, առանց բացառութեան, աշխատի օգտակար եկանակով։ Հենց որ հասարակութեան մէջ երևան են գալիս ոչինչ չանող մարդիկ, կամ երբ աշխատաւորների աշխատանքը այլոց է անցնում՝ երկրի հարստութիւնն իսկոյն և եթէ ընկնում է, այսինքն, առաջանում են բազմաթիւ մարդիկ, որոնք զուրկ են են լինում օգտակար և անհրաժեշտ իրերից. և որքան շատ է այդպիսի չունևորների թիւը՝ այնքան էլ երկիրը կամ ժոկովուրդը աւելի աղքատ է։ Եթէ մի երկրում կօշիկ ամեն մարդ չունի. ձմեռը բրդէ կամ մահուդէ զգեստ ամեն մարդ չի կրում, լաւ տաք, բնակարան և առողջ, սնդարար կերակուր բոլորը չունեն՝—այդպիսի երկիրը աւելի աղքատ է, քան թէ այն երկիրը, որտեղ այդ բոլորը կայ։

V

Շատ ժամանակ է անցել, զուցէ մի քանի հազարամեակ, մինչև որ վայրենու կեանքի անյարմար եղանակը փոխուել է և ընդունել այժմեան յարմար ձևը։

Դուք, օրինակի համար, թէյ եք ստանում, առանց դժւարութիւնների հանդիպելու, մի որև է խանութից։ Սակայն թէյը այնպէս հեշտ չէ ընկել խանութ, ինչպէս ընկնում է ձեր թէյամանի մէջ։ Հսկայական Չինաստանի մի քանի հսկայական նահանգների ազգաբնակութիւնը զբաղւում է յատկապէս թէյի մշակութեամբ, և հազարաւոր սայլաններ ու նաւավարներ թէյ են կրում ցամաքային ճանապարհով ու գետերով դէպի իրենց երկրի առևտրական գլխաւոր կենտրոնները, որտեղ դարձեալ հարիւրաւոր եւրոպական վաճառականներ գնում են թէյը, բեռնաւորում են նաւերը և ուղարկում եւրոպական քաղաքներ։

Այստեղ յայտնւում են նոր վաճառականներ, բայց արդէն ոչ թէ հազարներով, այլ տասնեակ հազարներով. յայտնւում են նոր սայլաններ, նաւատէրեր, բանւորներ՝ բարձելու և ցած բերելու համար, ճանապարհային գործակատարներ. յայտնւում են մեծ թէյավաճառատների վաճառականները և մանր առևտրականներ։ Եւ ահաթէ, վերջապէս, երբ է ընկնում թէյը ձեր թէյամանի մէջ։ Բայց այս բոլորի համար պահանջւում է և մեծ ազգաբնակութիւն, եւ զբաղմունքների խիստ բաժանում մարդկանց մէջ, եւ այն, որ իւրաքանչիւր մարդ զբաղվի մի յատուկ գործով։ Միայն զբաղմունքների բաժանման ժամանակ կարելի է որևէ իրի արտադրութիւնը կատարելագործութեան և էժանութեան հասցնել։

Զբաղմունքների բաժանումը, որի ժամանակ իւրաքանչիւր մարդ զբաղւում է մի առանձին գործով՝ կոչւում է աշխատանքի բաժանում։

Թէ աշխատանքի բաժանումը որքան պարզացնում և էժանացնում է իրերը, կարելի է տեսնել հետևեալ օրինակներից։ Գնդասեղը (քորոց) շատ հասարակ, չնչին բան է թւում, բայց արի՛ տես, որ նրա պատրաստութեան համար հարկաւոր է 18 առանձին-առանձին գործողութիւններ։ Մի մարդ ձգում է երկաթաթելը, միւսը ուղիղ ձև է տալիս նրան, երրորդը կտրում է, չորրորդը՝ սրում, հինգերորդը՝ գլխիկների համար ծայրը պատրաստում, վեցերորդը տեղաւորում է այդ գլխիկները, եօթներորդը՝ սպիտակացնում, և այլն։ Մի փոքրիկ գործարանում, պատմում է Ադամ Սմիտը, բռնում էին ընդամենը տասն հոգի, և թէև նրանք աղքատ էին, իսկ գործիքները՝ վատ, բայց և այնպէս նրանք օրական պատրաստում էին մօտ 12 ֆունտ գնդասեղ։ Մի ֆունտի մէջ կայ 4000 աւելի գնդասեղ, հետևաբար 12 ֆունտի մէջ՝ 48 հազար քորոց։

Իսկ որովհետև իւրաքանչիւր բանւոր պատրաստում էր մէկ տասներորդ մասը, ուրեմն ամեն մէկ բանւորին առանձին գալիս էր օրական 4800 գնդասեղ։ Եթէ այդ բանւորներն առանձին-առանձին բանէին և նրանցից իւրաքանչիւրը իր գործին վարժւած չը լինէր՝ նա օրական նոյնիսկ 20 գնդասեղ չէր շինի։

Որպէսզի գրպանի ժամացոյցը հասնի ծախւելու վիճակի՝ պէտք է ենթարկւի 43 գործողութեան։ Ահա դրանցից գլխաւորները ժամացոյցի նիւթի մշակումն, անիւների քսւելու տեղեր, բալանսը պահողներ, ատամնաւոր անիւներ, շարժւելու համար անիւներ և ատամներ, անւի գործիքներ, ժամացոյցի մեքենական կազմի զանազան բաղկացուցիչ մասեր, ռեգուլեատորներ, զսպանակներ, մազիկներ, ժամացոյցը փակելու կողպէքիկներ, շղթայիկներ, բալանսներ, պաքներ, ժամացոյցի կօրպուսի համար օղակներ, ներքին տախտակիկներ, ցիֆերբլատների համար տախտակիկներ, մետաղէ ցիֆերբլատներ՝ պատրաստել, ցիֆերբլատները արծնապակով պատել, ժամացոյցը զանազան ձևերով ու զարդանկարներով զարդարել, տառեր փորագրել նայլն։ Շվէյցարիայում ժամացոյցի պատրաստութեամբ պարապող 40 հազար մարդ կայ։ Նրանք տարեկան պատրաստում են 1 1/4 միլիոն ժամացոյց, այսինքն իւրաքանչիւր վարպետին գալիս է 31 ժամացոյց։ Եթէ իւրաքանչիւր վարպետ զբաղւէր բոլոր գործողութիւններով, ի հարկէ, չէր կարողանայ պատրաստել տարեկան նոյնիսկ 10 հատ ժամացոյց։

Երբ գործարանում բանւորները պատրաստում են գնդասեղ կամ ժամացոյց, նրանք շատ լաւ տեսնում են, որ թէև իրանցից իւրաքանչիւրը առանձին է աշխատում, սակայն մի ընդհանուր հետևանք է ստացւում, այսինքն վերջիվերջոյ առաջանում է մի գնդասեղ կամ ժամացոյց։

Գործարանում կամ մանուֆակտուրայում, որտեղ պատրաստւում են մահուդ, բեհեզ և այլ կտորներ, բանւորները դարձեալ տեսնում են որ իրանք մի ընդհանուր աշխատանք ունեն։ Եթէ մի քանի մարդ կտրում են մի ծառ, թէ և նրանցից ամեն մէկը իր կացնով առանձին է խրփում, սակայն նա լաւ հասկանում է, թէ որքան օգնում են միմեանց բոլոր փայտահատները։ Այժերի այսպիսի միացումը, երբ ամեն մէկը լաւ տեսնում է, թէ ընդհանուր ջանքը ինչ բանի էս ուղղած՝ կոչւում է աշխատանքի պարզ կապակցութիւն։

Բայց առաջ մենք օրինակ բերինք թէյը։ Չինացին, որ բեռնաւորում է իր սայլը թէյի արկղիկներով՝ ծովափնեայ քաղաք տանելու համար, կամ Պետերբուրգի վաճառականը, որ ձեզ թէյ է ծախում իր խանութից՝ հաւասարապէս ոչ մի գաղափար չունեն, թէ իրենք ինչպիսի զսպանակի դեր են կատարում թէյի ամբողջ շրջանառութեան մէջ։ Եթէ ինչ է իրենց յարաբերութիւնը դէպի այն չինացին, որ Ֆուչանի նահանգում թէյի տերևիկներ է քաղում։ Թէ աշխատանքի այս տեսակ բարդ կապակցութեան մէջ իւրաքանչիւր գործիչ որքան կարևոր է՝ կը պարզւի հետևեալ օրինակից։ Ենթադրեցէք, թէ Պետերբուրգ թէյ բերողները բոլորովին անհետացան։ Ակներև է, որ դուք առանց թէյի կը մնաք, որովհետև էլ ոչ ձեզ թէյ կը բերի։ Եթէ անհետանային բոլոր սայլապանները, ձեզ համար միևնոյնը կը լիներ։ Թէ անհետանային երկրի երեսից Ֆուչանի նահանգի բոլոր չինացիները։ Կամ ենթադրեցէք, թէ անհետացան բոլով թէյավաճառները։ Պարզ է, որ դուք դարձեալ առանց թէյը կը մնաք և ձեզ համար Չինաստանը իր թէյի բոլոր պլանտացիաներով չեղած կը համարւի։ Հետևաբար, ինչպէս աշխատանքի պարզ կապակցութեան և բաժանման ժամանակ իւրաքանչիւր բան-

ւոր, որ զբաղւում է մի առանձին գործողութեամբ, անհրաժեշտ է գործի համար, ճիշտ նոյնպէս և բարդ կապակցութեան մէջ ընդհանուր գործը չի յաջողւի, եթէ խախտւի կապը առանձին—առանձին գործողութիւնների մէջ։ Հանեցէք ժամացոյցի որևէ անիւը, և ժամացոյցը կանգ կառնի, այսինքն հետևանքը նոյնն է, ինչ կը լինէր, եթէ ժամացոյց բոլորովին չը լինէր։ Ըստ երևոյթին չափազանց չնչին թւացող առարկայի վրայ իսկ կարող էք տեսնել, թէ մարդիկ որքան սերտ կապւած են միմեանց հետ։ Որպէսզի մահուդէ զգեստ կարողանաք հագնել՝ հարկաւոր է որ գոյութիւն ունենան ոչխարներ. ոչխարներին խնամելու համար հարկաւոր են հովիւներ. ոչխարների համար հարկաւոր են դաշտեր, հարկաւոր են մարդիկ, որ պահեն ոչխարներ, լանան ու սանրեն նրանց բուրդը, հարկաւոր են գործարաններ՝ բրդից թել պատրաստելու և մահուդ գործելու համար. հարկաւոր են սայլապաններ, որ մահուդը քաղաք տանեն. մահուդը ծախելու համար հարկաւոր են խանութներ. զգեստներ կարելու համար հարկաւոր են դերձակներ։ Աստառի, կոճակների, ճարմանդների (петли), երիզների և ուրիշ զանազան բաների համար հարկաւոր են դեռ էլի մի ամբողջ շարք առանձին արտադրութիւններ, հիմնւած աշխատանքի պարզ բաժանման վրայ և յետոյ միացած ընդհանուր կապակցմամբ։ Այսպիսի կապակցութիւնը որ հիմնում է բոլոր աշխատաւորների ընդհանուր կախումը միմեանցից կոչւում է համերաշխութիւն (солидарность)։

VI

Երկրագնդի վրայ կան տաք և ցուրտ երկիրներ։ Առաջինների մէջ բնում է արմաւենի, հագի ծառ, բամբակ, շաքարեղէգն. բայց կան և այնպիսի ողորմելի երկիրներ, ինչպէս Ռուսաստանում Արխանգելսկի տունդրաները, որտեղ բացի մամուռից և քարաքոսից ուրիշ ոչինչ չի բնում։ Քանի կլիման լաւ է և հողը՝ արգաւանդ, այնքան էլ մարդ աւելի հեշտ և աւելի լաւ կապրի։ Արխանգելեան տունդրայի բնակիչը գուցէ ցանկանում է արմաւ ուտել, բայց այնտեղ արմաւենի չի բնում. նա գուցէ կը կարողանար շաքարաւազ պատրաստել, բայց այստեղ շաքարեղէգն չի բնում։ Տունդրաներից մի քիչ հարաւ արդէն կարող է գարի բնել. աւելի հարաւ բբնում է վուշ, վարսակ, կանեփ. էլ աւելի հարաւ՝ հաճար և, վերջապէս, երևան է գալիս ցորենը։ Ցրտաշունչ երկրի բնակիչը որքան էլ աշխատասէր լինի, այնուամենայնիւ չի կարող բացնել ոչ արմաւ, ոչ էլ շաքարեղէգն, այլ կարտադրէ միայն իր խղճուկ գարին։ Հետևաբար, պարզ է, որ գործի դնելով միայն այն արդիւնքները, որ տալիս է ժլատ բնութիւնը, բնակիչները երբէք չեն ունենայ կեանքի մէջ առանձնապէս բազմատեսակ առարկաներ։

Իհարկէ. եթէ Արխանգելսկի տունդրի բնակիչը կամենայ թէյ կամ սուրճ՝ կբերեն. բայց չէ՞ որ փոխարէնը նա պարտաւոր է ուրիշ որև է բան տալ։ Լաւ է, եթէ նրա հիւսիսային եղջերուները մէկին հարկաւոր են, իսկ եթէ ոչ ոչքի պէտք չեն՝ նա այդպէս էլ կմնայ առանց թէյի և սրճի։

Ուրիշ դրութեան մէջ է գտնւում արգաւանդ երկրի բնակիչը։ Այն ժամանակ, երբ Արխանգելսկի նահանգի բնակիչը արտադրում է գարի, այն էլ մէկին երկու, Սամարայի նահանգի երկրագործը ստանում է ցորենից մէկին 15, իսկ կորեկից մէկին 30, չնայած որ թէ գարու և թէ ցորենի ու կորեկի համար պահանջւում է նոյն աշխատանքը։ Բայց որքան էլ սամարեցին պարծենայ իր

նահանգի բարերար կլիմայով, այնուամենայնիւ նա պիտի նախանձի եգիպտացուն կամ չինացուն, որն ստանում է բրինձ մէկին 100։

Եւ որքան աւելի մօտենանք հասարակածին, այնքան էլ աւելի ճոխ բնութիւն կգտնենք, աւելի բազմատեսակ արտադրութիւններով։ Արխանգելսկի նահանգի ամենահիւսիսային մասի բնակիչը բացի գարուց և հիւսիսային եղջերուից ուրիշ ոչինչ չունի. սամարեցին արդէն ունի դարի, վարսակ, հաճար, ցորեն, կորեկ, ձիեր, կովեր, ոչխարներ, այծեր։ Աւելի հեռու գալիս են եգիպտացորեն, թթենի, խաղող։ Է՛լ աւելի հեռու՝ բնինձ. ապա արմաւենիների զանազան տեսակները, բանան, շաքարեղէգն, թէյ, սուրճ, կինամոմոն (դարչին), վանիլ և այլն. նկատելու է և այն, որ բուսական թագաւորութեան արդիւնքների մեծ մասը հարաւային երկրների բնակիչներին տալիս է ոյժերի աւելի քիչ սպառումով, քան խիստ երկրի բնակչին։

Կլիման կարևոր և ոչ միայն նրանով, որ տալիս է աւելի ճոխ հում արդիւնքներ, աւելի շատ բաներ ուտելիքի համար, այլ և նրանով, որ մարդ միւս բոլոր դէպքերում աւելի քիչ աշխատանք է թափում։ Բնակարանները հիւսիսում ենթարկւում են աւելի ուժեղ փչացման՝ և դրա համար էլ պէտք է շինել աւելի հաստատուն և շուտ-շուտ նորոգել, իսկ այս բոլորը աւելորդ աշխատանք է։

Հիւսիսում լաւ տաշած փայտից շինած տունը աւելի քիչ կը դիմանայ, քան Տուլայի նահանգում բարդի փայտից շինած տունը. Ռուսական ոչ մի շինութիւն չի կարող համեմատւել դիմացկանութեան կողմից Արևմտեան Եւրոպայի նմանօրինակ շինութեան հետ։ Այս բանը իմացան մեզանում նաև ֆրանսիական ինժեներները, որ շինում էին Վարշաւայի երկաթուղին։ Կամուրջները, որ շինւում էին արտասահմանեանի օրինակով՝ Ռուսաստա-

նում չէին դիմանում նոյնիսկ մի տարի։ Կ. Պոլիսը, օրինակ, հռչակւած է իր հրդեհներով և եթէ նա այրւում է՝ այրւում է մինչև վերջը, մէկ ծայրից մինչև միւսը։ Եւ ինչ, մի ամսից շինւում է մի նոր Կ. Պոլիս, նոյնքան գեղարուեստական, ինչպէս առաջ, նոյնպիսի օրիգինալ և գեղեցիկ շենքերով։ Այսպիսի անսովոր արագութիւնը առաջ է գալիս պարզապէս նրանից, որ Թիւրքիայում տները շինում են տաշեղներից, ցախերից, փայտիկներից և նման թեթև նիւթերից, որոնց Ռուսաստանի անտառոտ վայրերում ոչ ոք չի վերցնի իբրև վառելիք։ Ապա այդպիսի փայտէ տունը, որ սովորաբար լինում է երկյարկանի, ծեփւում է կաւով կամ կրով և ներկւում մի պայծառ գոյնով։ Ո՞րտեղ է աշխատանքը աւելի յաջող. այնտեղ, որտեղ խիստ ցրտման հրամայում է կիտել ահագին նիւթ, թէ՞ այնտեղ, որտեղ տաք կլիման թոյլ է տալիս տեղաւորւել մեծ յարմարութեամբ հիւսւած տների մէջ։

Երկրի բնական հարստութիւններին, որոնք աշխատանքը ոչ միայն յաջող են դարձնում, այլև օգնում են աշխատանքի բազմազանութեան, պատկանում են նաև հանքային հարստութիւնները։ Ենթադրեցէք, որ Պետերբուրգում բացւում են ածխի հանքեր, երկաթի կամ պղնձի հանքեր, կամ որ աւելի լաւ է՝ ոսկու հանք։ Պետերբուրգի բնակիչները, որ այժմ պարապում են միայն առևտրով, կը դառնային այն ժամանակ ոսկի մշակողներ և կը հիմնէին ամենաբազմազան մետաղական արտադրութիւնների գործարաններ։ Ամերիկայում յանկարծակի գտնւած նաւթը ստեղծեց մի նոր չեղած արդիւնաբերութիւն և այսպէս կոչւած «նաւթի հարուստներ»։ Անգլիայում, Բելգիայում, Պրուսիայում, քարածխի հանքերը ստեղծեցին նոյնպէս նոր արդիւնաբերութիւններ։ Թէև անգլիացոց, գերմանացոց և մեզ մօտ [illegible] թթենի, խաղող,

35084-62
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ԱՄ. Ա. Մաշ[illegible]

արմաւ, թէյ, սուրճ, բայց այնուամենայնիւ կարելի է դրանցից ձեռք բերել, որովհետև նրանց փոխարէն կարելի է տալ զանազան երկաթէ, չուգունէ և ուրիշ տեսակի առարկաներ և փոխել իւրը ուրիշների հետ։ Եթէ Արխանգելսկի տունդրի բնակիչները ունենային երկաթի, ոսկու, քարածխի հանքեր՝ նրանք էլ կունենային մի բան՝ փոխանակելու համար այնպիսի արտադրութիւնների հետ, որ նրանք այժմ չունեն և չեն կարող մի բանի հետ փոխանակել, որովհետև բնութիւնը նրանց տուել է միայն մամուռ, իսկ կենդանիներից միայն եղջերու։ Էսկիմոսները չունեն մի բնական հարստութիւն—և նրանք մահ են գալիս՝ հագած կենդանու կաշի և մնում են հում ձկներով։

Բնական հարստութիւններին պատկանում է նաև ջուրը, եթէ շատ է և հեշտութեամբ կարող է դառնալ շարժիչ ոյժ, կամ եթէ ծառայում է իբրև հաղորդակցութեան միջոց։ Երկաթուղիները, չնայած իրանց բոլոր յարմարութիւններին, որպէս հաղորդակցութեան միջոց, երբէք չէն կարող համեմատուել ջրի հետ։ Գետերի վրայ և ծովային յարմար նաւահանգիստներում գտնուող քաղաքները միշտ հարուստ քաղաքներ են, որովհետև ծառայում են իբրև առևտրական կենտրոններ։ Ջրերով շրջապատուած և յարմար եզերքային գծով երկիրները միշտ լինում են արդիւնաբերական, և Անգլիան, առանց իր ծովերի, երբէք չէր հասնի իր այժմեան հարստութեան։

Որպէսզի աւելի պարզ հասկացուի, թէ ինչպէս բնական հարստութիւնները օգնում են աշխատանքի յաջողութեան՝ վերցրէք երկու երկիր. մէկը ինչպէս Անգլիան, որտեղ կան գետեր և ծովեր, որ ծառայում են իբրև հաղորդակցութեան միջոցներ, կան երկաթի, պղնձի և ուրիշ հանքեր, հարուստ քարածխահանքեր, բնում է ամէն տեսակ հացահատիկ, կան բազմատեսակ ցեղեր ոչխարնե-

րի, այծերի և ուրիշ ընտանի կենդանիների, և վերցրէք Էսկիմոսների երկիրը, ընկած հեռաւոր հիւսիսում տունդրների մէջ, ուր բացի իսլանդական մամուռից ոչինչ չի բուսնում և չկայ ուրիշ կենդանի, բացի եղջերուներից և շներից։ Անգլիայում նրա բոլոր բնական հարստութիւնները օգնեցին երևան գալու արդիւնաբերող հարուստ ազգաբնակութեան, իսկ Էսկիմոսների խղճուկ երկրում բացի Էսկիմոսներից, ուրիշ բան չի դուրս գալ։

VII

Անգլիան, երբ այնտեղ բնակւում էին բրիտները, ունէր ճիշտ նոյնպիսի հող, ինչպէս և հիմա. ունէր նոյն կլիման և նրա ծոցում գտնւում էին նոյն գանձերը, սակայն բրիտները շատ հեռու էին այն ապրուստից, որ ունեն հիմակւայ անգլիացիք։ Ներքին Աֆրիկայում կարող են բնել և՛ թթենիներ, և՛ խաղող, և՛ բամբակ. գտնում կարող են գտնել երկաթահանքի և քարածուխի անբաւ հարստութիւններ, բայց աֆրիկացիք այնուամենայնիւ մերկ են մահ գալիս և ոչ միայն չգիտեն պատրաստել մետաքսի և բամբակի գործւածքներ, այլ և նոյնիսկ ամենահասարակ երկաթէ և մետաղէ իրեր չեն կարողանում շինել։ Ի՞նչ է պակասում Աֆրիկայի վայրենիներին, որ ապրեն անգլիացոց, ֆրանսիացոց, կամ մեզ պէս. դուք կասէք, որ նրանք չեն աշխատում։ Ո՛չ, նրանք աշխատում են, միայն թէ նրանց աշխատանքը ուղղւած է ոչ այն կողմը, ուր հարկաւոր է։ Նրանք կատարելապէս գոհ ու երջանիկ են իրանց գետնափոր որջերով, որոնց մէջ ապրում են. գոհ են նոյն ողորմելի կերակրից, որով սնւում են, և իրանց բոլոր ժամանակը անց են կացնում կամ պատերազմելով միմեանց հետ և կամ պառկած իրանց խրճիթներում, ոչ-

ինչ չանելով։ Այդպէս նրանք կարող են պառկած մնալ մինչև յաւիտեան և երբէք չեն կարողանայ ապրել աւելի լաւ, այլ կմնան նոյն վայրենիները։ Եթէ մարդկանց մէջ չկայ աւելի լաւ ապրելու պահանջ նրանք ամբողջ դարեր կմնան նոյն անտեսական մակերևոյթի վրայ։ Ամերիկայում կարմրամորթների ցեղերը մինչև այժմ էլ ապրում են այնպէս, ինչպէս ապրում էին սրանից մի քանի հարիւր տարի առաջ։ Դրա համար համար էլ ժողովուրդների հարստութեան համար հարկաւոր է, որ նրանք ունենան ցանկութիւն լաւ ապրելու, իսկ լաւ ապրելու ցանկութիւնը ստեղծում է եռանդ, որը աշխատանքի գլխաւոր շարժիչն է։

Իւրաքանչիւր մարդու մէջ կայ եռանդ, բայց անտեսական մաքով եռանդ կլինի այն ոյժը, որ դրդում է մարդուն դէպի օգտաւէտ աշխատանք։ Զինգիս-խանի ժամանակների մոնղոլները նոյնպէս եռանդոտ էին, բայց նրանց ամբողջ եռանդը գործ էր դրւում պատերազմների և ժողովուրդներ ստրկացնելու վրայ։ Որպէսզի մի խաղաղ ժողովուրդ կարողանայ հարստանալ՝ նա պէտք է ամենից առաջ հաւատացած լինի, որ նրանից չեն խլի այն, ինչ որ նա վաստակում է. բացի դրանից նա պէտք է օգտուի աշխատանքի համար լիակատար ազատութեամբ. եթէ չի լինի ոչ այս, ոչ այն՝ ժողովրդի մէջ չի յայտնուի ոչ եռանդ, ոչ յաջող աշխատանք։ Տաճկաստանում, որտեղ դաղին կամ մի ուրիշ պաշտօնեա հեշտութեամբ կարող է խլել երկրագործից կամ բանւորից թէ փողը, թէ նրա աշխատանքի առարկաները՝ բանւորը անգործութիւնը կը գերադասի աշխատանքից։

Որպէսզի եռանդը մեզ տանի դէպի հարստութիւն հարկաւոր է, որ նա շարունակ գործէ չթուլացող ուժով։ Վայրենիները աշխատում են միայն ծայրահեղ կարիք եղած րոպէներում և ճիշտ այնքան, որքան հարկաւոր է այդ

րոպէին։ Եթէ քաղց զգաց վայրենին, նա ձեռք կբերի սընունդ միայն մի անգամւայ համար և չի մտածի պաշարի մասին։ Այսպիսի եռանդը երբէք չի ստեղծի ոչ ապահովութիւն, ոչ տևական հարստութիւն։ Աշխատանքը պէտք է լինէ ոչ թէ բռնկումներով, այլ անընդհատ. և եթէ որև է երկրի ժողովրդի եռանդը աչքի է ընկնում իր անընդհատականութեամբը, ապա այնտեղի ժողովուրդը, երբ դրա հետ միասին ուրիշ ոչինչ չի արգելում նրա աշխատանքին, անպայման կհարստանայ։

Երևակայեցէք մի երկիր, որտեղ կայ և՛ ոսկու ու երկաթի հանք, և՛ ծովեր, և՛ գետեր, և՛ ճոխ բուսականութիւն, և ապրում է այդ երկրում մի շատ եռանդուն ժողովուրդ, այսինքն, մի ժողովուրդ, որ ցանկանում է հարուստ լինել և որը ընդունակ է շարունակ և անդադրում աշխատելու։ Բաւական են միայն ցանկութիւնը և եռանդը, որպէսզի ժողովուրդը հարստանայ։ Երևակայեցէք, որ դուք ունէք երկաթի հանք, ունէք փայտ, ունէք սաստիկ ցանկութիւն մեծադեայ դանակ ունենալու և պատրաստ էք շինելու։ Բաւական է այս բոլորը, որպէսզի դուք մի դանակ ունենաք։ Իհարկէ, ոչ։ Ուրեմն բացի ցանկութիւնից անհրաժեշտ է նաև նրան բաւարարութիւն տալ գիտենալը։ Ենթադրեցէք, որ դուք ու ձեր ընկերը ունէք այն բոլորը, ինչ որ հարկաւոր է դանակ շինելու համար, գիտէք նա և շինելու ձևը, բայց ձեզանից մէկը ունի ճարտարութիւն և ընդունակութիւն, իսկ միւսը չունի։ Մէկը կսկսի աշխատել արագ ու լաւ, միւսը վատ և դանդաղ։ Ուրեմն, արդիւնաբերութեան յաջողութեան համար հարկաւոր է բացի բնական հարստութիւններից, բացի լաւ ապրելու ցանկութիւնից, և բացի եռանդից, նայն գիտութիւն, ճարտարութիւն և ընդունակութիւններ։ Երկու ժողովրդներից նա կլինի աւելի հարուստ, որը միւ-

նոյն պայմանների մէջ ունի աւելի շատ գիտելիքներ և ընդունակութիւններ։

Քանի դեռ մարդիկ ապրում են վայրենիների, կամ կիսավայրենիների կեանքով՝ նրանց պահանջները սահմանափակ են, ընդունակութիւնները քիչ զարգացած և նրանք կառավարւում են քիչ և ոչ բարդ գործիքներով։ Առաջին վայրենին որսում էր վայրենի եղջերու՝ ուղղակի հալածելով նրան և աշխատելով բռնել եղջիւրները։ Երբ այս միջոցը անյարմար նկատուեց՝ վայրենին հնարեց պարսատիկը, նետ ու աղեղներ։ Դառնալով հողագործ՝ վայրենին դարձեալ անհրաժեշտ համարեց թեթևացնել իր աշխատանքը—և ահա յայտնուեցին թի, բահ, խարոր, գերանդի և ցաքան։ Այս բոլորը գործիքներ են, որ թեթևացնում են աշխատանքը, այսինքն մարդուն տալիս են մեծ օգուտ՝ ոյժերի քիչ սպառմամբ։ Գործիքները ոչ միայն ծառայում են աշխատանքը թեթևացնելուն, այլև առանց նրանց անկարելի է ամենահասարակ արդիւնաբերական գործը։ Անկարելի է տուն շինել և փայտ ունենալ առանց կացնի կամ խզարի, անկարելի է հաց ունենալ, եթէ հողը չհերկես և հացը չը հնձես, թէկուզ հասարակ դանակով։ Առանց տեղափոխելու օժանդակ միջոցների և գործիքների, ինչպէս են նաւակները, նաւերը, առագաստանաւերը, սայլերը, սահնակները՝ չի կարելի ունենալ յարաբերութիւններ և առևտուրը չէր կարողանայ գոյութիւն ունենալ։

Բայց կոշտ-կոպիտ, անկատար գործիքներով ձեռք են բերւում անկատար էլ հեռանքներ։ Չի կարելի շորը լաւ ձևել բութ մկրատով, չի կարելի հողը լաւ կտրել բութ դանակով, չի կարելի լաւ հողը մշակել վատ գործիքներով։ Ո՞րքան մարդ աւելի զարգացած ու խոհուն է, այնքան էլ աւելի շատ միջոցներ է գտնում բարելաւելու գործիքնե-

ը, որովհետև միևնոյնը չէ, թէ արդեօք մի իր շինւում է մէկ ժամում, թէ երկու ժամում։ Գործիքների բարելաւումը տանում է ոչ միայն դէպի աշխատանքի խնայողութիւն, այլև բարձրացնում է արդիւնքի լաւութիւնը։ Անցեալ դարի վերջից այս բանին սկսեցին հասնել մեքենաներով։ Մեքենաները մարդուն թոյլ են տալիս կատարելու ոչ միայն այնպիսի գործեր, որոնք բարձր են ոյժից, այլև այնպիսի աշխատանքներ, որոնք չափազանց նուրբ են մարդկային ձեռքերի համար. շատ կարելի է, որ կան այնպիսի վարպետ կանայք, որոնք ձեռներով գործում են անգլիական մեքենական գուլպաների և ձեռնոցների նման գուլպա և ձեռնոց, բայց առաջին՝ այդպիսի ճարտար կանայք քիչ կան, և երկրորդ՝ մեքենան գործում է այնպէս արագ, որ նրան երբէք չի կարող հաւասարւել ամենաարագ գործողն անգամ։ Բայց այս արդիւնաբերութիւնը դեռ այնքան էլ նրբերից չէ, անհամեմատ աւելի նշանաւոր է ժամացոյցի արդիւնաբերութիւնը, որտեղ շատ մասեր այն առոյգան նուրբ են և քնքոյշ, որ ձեռներով պատրաստել բոլորովին անհնար է։ Շատ ընդունակ վարպետը բազմամեայ վարժութիւնից յետոյ միայն կարող է պատրաստել ժամացոյցի անիւները, զսպանակները այնպէս որոշ ու կանոնաւոր, ինչպէս որ պատրաստում է մեքենան։

Թեթևացնելով աշխատանքի մեխանիզմը, մեքենաները հաւասարացնում են մարդկանց ընդունակութիւնները։ Այն, ինչի համար որ առաջ պահանջւում էին տաղանդ և առանձին ճարպկութիւն՝ կարող են արդիւնաբերել այժմ միջակ ոյժերի և տեխնիկական ընդունակութիւնների տէր մարդիկ։ Օրինակի համար ջուլհակի մեքենա—դազգահի վրայ մարդու ամբողջ աշխատանքը կայանում է նրանում, որ առէջք գցէ (հինէ) և մաքուք փաթաթէ և ապա միաց-

նէ դազգահը շոգեմեքենայի հետ։ Դազգահը խկոյն կսկսէ իր գործը և այն էլ այնպիսի արագութեամբ և հաշուով, որ մարդու համար բոլորովին անհնար է։ Սակայն սա չէ մեքենայի խորամիտ նշանակութիւնը։ Ամենից զարմանալին նրանումն այն է, որ հէնց որ աչքի թելը կտրւում է՝ մեքենան կանգ է առնում։ Այս դէպքում, դազգահի մօտ կանգնած մարդու պարտաւորութիւնն է գտնել ու կապել կտրած թելը։ Այսպիսով, ոստայնակի աշխատանքը դարձել է հասարակ հսկողութիւն մեքենայի վրայ և թելեր կապել՝ մի բան, որ կարող է անել համարեա ամեն մի մանուկ։

VIII

Եթէ աշխատանքը ստեղծում է հարստութիւն, ապա իհարկէ մեծ նշանակութիւն ունի, թէ ինչի վրայ է աշխատում մարդը։ Կարելի է աշխատել, աւազ համարելով և մաղի մէջ ջուր ածելով։ Միայն այն աշխատանքն է ստեղծում հարստութիւն, որը առաջ է բերում օգտակար առարկաներ։ Եթէ մի քանի մարդ ամբողջ գիշերը թուղթ են խաղում՝ ապա թէև նրանք աշխատում են և այն էլ շատ սրտանց, բայց տնտեսագիտական մտքով նրանց աշխատանքը հասարակութեանը բերում է ոչ թէ օգուտ, այլ վնաս։ Ի՞նչ օգտակար բան ստացաւ նրանից, որ նրանք թուղթ խաղացին։ Պարզապէս ոչինչ. Ենթադրենք, թէ բոլոր խաղացողները միասին ունէին 20 բուբլի։ Թուղթ խաղացողներից մի քանիսը տարեցին, միւսները տարուեցին. տարուողները փող տուին տանողներին, սակայն, խաղացողների ունեցած 20 ր. դարձեալ մնաց 20 բուբլի։ Տանողները, իհարկէ, դարձան աւելի հարուստ, տարուողները աղքատ, բայց այդ բանից որևէ հարստութիւն աւելացաւ Ռուսաստանում։ Նրանում չաւելացաւ ոչ հաց, ոչ

շոր, ոչ կօշիկ, չաւելացաւ կեանքի համար հարկաւոր ոչ մի առարկայ. չաւելացաւ ոչ գիտութիւն, ոչ ճարտարութիւն, ոչ շնորհք, և ընդհանուր հետևանքը եղաւ այն, ինչ կլինէր, եթէ թուղթ խաղացողները կամ քնէին ամբողջ գիշերը, կամ նստէին ձեռները ծալած։ Տնտեսագիտութիւնը, որ ստեղծել է Ադամ Սմիտը, միայն այն աշխատանքն է օգտակար ընդունում, որը արդիւնաբերում է օգտակար իրեր։ Իսկ եթէ աշխատանքից ոչ մի օգտակար իր չի առաջանում՝ այդպիսի աշխատանքը նա կոչում է վնասակար։

Ճիշտ է, ուսուցիչները, գիտնականները, գրականագէտները նոյնպէս չեն կարում կօշիկ, զգեստ, չեն թխում հաց և չեն ստեղծում նիւթական օգտաւէտ առարկաներ, բայց նրանց աշխատանքը այնուամենայնիւ օգտակար է։ Օգտակար է, որովհետև տալիս է գիտութիւն և սովորեցնում է մարդկանց նրանց չգիտեցածը։ Այս մարդկանց աշխատանքը միայն այն ժամանակ կլինէր վնասակար, երբ նրանցից չստացուէր դէպի օգուտը տանող ոչ մի գիտութիւն։ Իսկ եթէ նրանց ջանքով դուք ձեռք էք բերում այնպիսի տեղեկութիւններ, որոնք ձեզ յետոյ օգտակար են դարձնում ձեր անձի և ուրիշների համար՝ ապա նրանց աշխատանքը օգտակար է և երկրի համար ձեռնտու։

Բացի օգտակար և վնասակար աշխատանքից, կայնաև օգտակար ու վնասակար սպառում։ Թուղթ խաղացողները, որոնց մասին մենք խօսեցինք, աշխատեցին ի վնաս Ռուսաստանի. սակայն նրանք ի վնաս աշխատեցին ոչ միայն նրանով, որ երկրին ոչ մի օգուտ չբերին նրանք, վնաս բերին և այն ամենով, ինչ սպառեցին։ Հաւաքուելով թղթախաղի՝ նրանք եկան կառքերով, խաղացին լուսաւորուած սենեակում, սենեակում կար ամենատեսակ կահ-կարասի, խաղի միջոցին նրանք թէյ խմեցին, յետոյ ընթրե-

ցին և գինի խմեցին, ապա ցրուեցին իրանց տները՝ դարձեալ կառքերով։ Եւ այս բոլոր սպառումը վնաս էր, Ո՛չ միայն թուղթ խաղացողների աշխատանքը զուր գնաց, որովհետև դրանից ոչինչ չստացուեց, այլ զուր գնաց և՛ կառապանների աշխատանքը, որոնք նրանց բերին ու տարան, զուր գնաց այն մարդկանց աշխատանքը, որոնք նրանց համար արտադրել էին թէյ, շաքար և պաքսիմատ, զուր գնաց խոհարարի աշխատանքը, որ նրանց ընթրիք էր պատրաստել, մսագործի աշխատանքը, որ նրանց միս էր մատակարարել, այն մարդկանց աշխատանքը, ովքեր շինել էին մոմերը, պատրաստել էին կահ-կարասին, զուր գնաց դերձակի աշխատանքը, որ նրանց զգեստ էր կարել։ Մի խօսքով կորաւ այն բոլոր մարդկանց աշխատանքը, որոնք նրանց համար աշխատել էին։ Եթէ դուք ուզում էք թքուչուն որսալ, հրացան էք արձակում և նայում—թռչունը ընկաւ, թէ թռաւ։ Եթէ թռաւ՝ ձեր աշխատանքը կորաւ թէ ոչ։ Կորաւ։ Եւ կորաւ անօգուտ ոչ միայն ձեր աշխատանքը, այլ և եթէ դուք միշտ այդպէս էք որսում՝ ապա կորաւ նոյնպէս և՛ գինագործի աշխատանքը, որ ձեզ համար հրացան էր շինել, և՛ այն մարդկանց աշխատանքը, որոնք շինել էին փամփուշտ, և՛ նրանցը, ովքեր պատրաստել էին ձեզ համար սնունդ, շոր և աշխատել էին ձեր գոյութեան համար։ Երկրի համար աւելի ձեռնտու կլինէր, եթէ ձեզ համար հրացան, փամփուշտ, զգեստ, սնունդ պատրաստելու փոխարէն կարէին այդ ժամանակ մի քանի զոյգ կօշիկ՝ բոբիկ ման եկողների համար, որովհետև այն ժամանակ դուրս կգային օգտակար իրեր, իսկ հիմա ստացուեց միայն ձեր անաջող որսորդութիւնը, և ձեզ վրայ աշխատողների բոլոր աշխատանքը դուք ջուրը գցեցիք։ Միայն այն սպառումն է ձեռնտու, որը տանում է դէպի օգտաւէտ հետևանքներ։

IX

Իւրաքանչիւր մարդ արտադրում է իր սեփական աշխատանքով շատ քիչ և նա չի կարող իր համար ամենբան պատրաստել։ Ենթադրենք, որ մի մարդ որևէ առարկայ կամ իր աւելի շատ ունի, քան նրան հարկաւոր է, իսկ մի ուրիշը չունի այդ բաները։ Դրա համար, առաջինը սիրով կփոխէր աւելորդ մասը, իսկ երկրորդը նոյնպէս սիրով կգնէր այն։ Բայց, եթէ, դժբախտաբար, վերջինս չունի առաջնին հարկաւոր ոչ մի բան՝ ապա փոխանակութիւն նրանց մէջ չի կայանայ։ Դուք, ասենք, ունէք երկու դանակ, իսկ ձեր ընկերը ոչ մի հատ։ Դուք մէկը սիրով կզիջէիք նրան, նա էլ սիրով կուզենար դանակ ունենալ, բայց նա փոխարէնը տալու ոչինչ չունի, ուստի և կմնայ առանց դանակի։ Մսագործը խանութում ունի շատ աւելի միս, քան թէ իր անձի համար հարկաւոր է, գինեվաճառն էլ կամ հացթուխը ուրախութեամբ ձեռք կբերէին նրա ունեցածի մի մասը, բայց նրանք չեն կարող փոխարէնը բացի գինուց և հացից մի ուրիշ բան տալ, եթէ մսագործը արդէն ունի գինի և հաց, և կամ դրանք նրան հարկաւոր չեն։ Այդ դէպքում նրանց մէջ փոխանակութիւն չի առաջանայ և նրանք միմեանց ոչ մի ծառայութիւն չեն մատուցանի։

Այս անյարմարութիւնից խուսափելու համար՝ մարդիկ արդէն վաղուց հոգս են տարել, որ բացի սեփական գործի արտադրութիւններից, ունենան և այնպիսի մի ապրանք, որ հարկաւոր լինէր ամենքին և որով կարելի լինէր փոխանակել իրերը։

Ասում են, որ հին ժամանակներում այսպիսի փոխանակութեան միջոց էր տաւարը։ Այժմ էլ կան ժողո-

վուրդներ, որոնց մէջ երբեւ փոխանակութեան միջոց ծառայում են բնական արդիւնքները։ Հաբէշստանում գործ է ածւում սրա համար կերակրի աղը։ Մի քանի տեղերում, ինդոսի ափերի վրայ՝ խեցիների մի առանձին տեսակը. Նոր-երկրում՝ չորացած փրփրուկը (треска), իսկ Շոտլանդիայում Ադամ Սմիտի ժամանակ յաճախ էր պատահում, որ բանւորը բերում էր գինետուն փողի տեղ՝ մեխ։

Այնպիսի խոշոր առարկաները, ինչպիսին է անասունը, մանաւանդ ողջ անասունը, անյարմար են փոխանակութեան համար, որովհետեւ աղ գնել ցանկացողը, եթէ միմիայն կենդանի ունի՝ պէտք է մի քիչ աղի համար տայ մի ամբողջ եզը կամ ոչխար։ Բայց եթէ եզան և ոչխարի փոխարէն նա ունենայ մի այնպիսի ապրանք, որ կարելի լինէր առանց վնասի բաժանել ցանկացած թւով մասերի՝ նա առանց դժւարութեան կհաշւէր, թէ որքան պէտք է տայ այդ ապրանքից, որպէսզի ստանայ իր ցանկացածը։

Փոխանակութեան համար ամենայարմար ապրանք դուրս եկան մետաղները և այդ պատճառով նրանցից փող էին շինում ամենահին դարերում։ Մետաղը ներկայացնում է այն յարմարութիւնը, որ նա, իր դիմացկունութեամբ, կարող է պահպանւել երկար ժամանակ, որ նրան կարելի է առանց վնասի բաժանել որքան ուզում էք մասերի, և այդ մասերը դարձեալ կարելի է վերածել մի զանգւածի։ Ահա թէ ինչու մե[illegible] փոխարկութեան գործիք, գերադասւեց բոլոր միւս ապրանքներից։

Փողը շինւում էր հին ժամանակներում զանազան մետաղներից։ Սպարտացոց փողը երկաթից էր, հռոմայեցոցը՝ պղնձից, կարթագենացոցը՝ արծաթից և ոսկուց։ Ներկայումս դրամը պատրաստւում է պղնձից, արծաթից և ոսկուց։

Սկսած այն ժամանակից, երբ թողնեց ապրանքը

ապրանքի հետ անմիջական կերպով փոխանակելը եւ յայտնւեց փողը, մսագործը այլեւս չէ քաշ տալիս իր եզը կամ ոչխարը հացագործի մօտ՝ փոխելու նրա հացի հետ, այլ բերում է եզը շուկայ, որտեղ և ծախում է փողով։ Ստացած փողի քանակութիւնը ցոյց կտայ նրան, թէ ինչ քանակութեամբ հաց կարող է գնել։ Փողը պարզում է բոլոր հաշիւները, և մարդու համար աւելի հեշտ է աչքի առաջ ունենալ, որ մսի ֆունտը արժէ 15, 20 կոպէկ, քան թէ ութ ֆունտ հաց, կամ երկու շիշ գարեջուր, կամ մէկ շիշ օղի։ Առանց փողի և մանաւանդ այժմ գոյութիւն ունեցող առարկաների բազմատեսակութեան մէջ՝ անկարելի կլինէր փոխանակութիւն անել։ Քանի ֆունտ հացը, կամ շիշ գարեջուրը կամ օղին արժէ, օրինակի համար, մի արշին մահուդը, մի զոյգ կօշիկը այս կամ այն գիրքը, մի դանակ, մի մկրատ, չէ կարելի նոյնիսկ յիշել և չըխառնւել հաշիւների մէջ։ Դրա համար, փողը հարստութիւն չէ, այլ միայն փոխանակելու միջոց։ Եթէ մի ժողովուրդ աւելի քիչ փող ունի, քան արժեն նրա ապրանքները՝ ժողովուրդի հարստութիւնը դրանից չի պակասի, նմանապէս և, եթէ նա չափազանց շատ փող ունի՝ հարստութիւնը չի աւելանայ։ Առաջին դէպքում փողի քիչ քանակութիւնը շրջանառութիւն կունենայ աւելի յաճախ, այսինքն, արագ կկատարւի գնումը, վաճառումը. իսկ երկրորդ դէպքում շրջանառութեան մէջ կմտնեն միայն փողերը, որոնք պէտք են փոխանակութեան համար, և աւելորդները կմնան առանց շրջանառութեան։

Այն տասն ռուբլին, որ ձեզ նւիրել են, ձեզ համար հարստութիւն չէ, այլ փոխանակիչ ապրանք։ Բայց այդ ապրանքը դուք չշինեցիք, թէև նրանով կարող էք ձեռք բերել ուրիշի աշխատանքը։ Առանց աշխատանքի ձեր ձեռք բերած փողը, եթէ նա նոյնիսկ մի միլիօն լինի՝

կարող է երկրի համար իբրև հարստութիւն ամենևին չըծառայել։ Թիւրքիայում փաշաները շատ փող ունեն—սակայն այդ երկիրը այնուամենայնիւ շատ աղքատ է։ Այն, ինչ որ մի առանձին մարդու համար ծառայում է իբրև հարստութիւն՝ միշտ հարստութիւն չէ նաև ժողովրդի համար։ Հէնց այս բանն է, որ բացատրեց Ադամ Սմիթը։

ՊԵՏ ԿՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
и. им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

30ş.

ՀՀ Ազգային գրադարան
NL0199329

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Կաուցկի. Աւստրեայի ճգնաժամը . . 7 կ.
2. Էնգելս. Գիւղացիութեան հարցը Ֆրանսիայում և Գերմանիայում. . . . . »
3. Աշխատանք, հարստութիւն, փող. . . 7